

Տնտեսական ցնցումների ազդեցության վերլուծությունը մոնետար մոդելում

Մոնետար մոտեցմամբ վճարային հաշվեկշռի պակասորդը փողի առաջարկի՝ պահանջարկի նկատմամբ գերազանցման հետևանք է:

Ինչպես հայտնի է, վճարային հաշվեկշիռն ընթացիկ հաշվի (CA), կապիտալի ու ֆինանսական հաշվի (K) և միջազգային պահուստների փոփոխության (dR) հանրագումարն է.

$$BP = CA + K + dR = 0 \quad \Rightarrow \quad CA + K = -dR$$

Վերջինից հետևում է, որ երբ ընթացիկ և կապիտալի ու ֆինանսական հաշիվների հանրագումարը պակասորդային է, ապա ԿԲ այդ պակասորդը ֆինանսավորում է պաշտոնական պահուստները վաճառելու միջոցով:

Դրանով իսկ, ԿԲ վաճառում է արտարժույթ (պահուստները կրճատում է), երբ վճարային հաշվեկշիռը պակասորդային է: Հակադարձաբար, ԿԲ գնում է արտարժույթ (պահուստներն ընդլայնում է), երբ վճարային հաշվեկշիռն ավելցուկային է:

Իսկ եթե ԿԲ չի միջամտում (պահուստների պաշարը չի փոխում), ապա վճարային հաշվեկշիռը հավասարակշռվում է փոխարժեքի փոփոխության (արժույթի արժեզրկման կամ արժևորման) միջոցով: Այդ դեպքում, ընթացիկ հաշվի մնացորդը ֆինանսավորվում է կապիտալի հաշվի համարժեք և հակադիր մնացորդով.


$$dR = 0 \quad \Rightarrow \quad CA = -K$$

Մոդելի հավասարակշռությունը

Մոդելը հավասարակշռվում է (գծ. 1), երբ առկա են հետևյալ երեք նախապայմանները.

- Գնողունակության համարժեքությունը տեղի ունի. $S = P/P^*$:
Գծ. 1-ի առաջին գրաֆիկում այդպես է P_1 տեղական գնի, S_1 փոխարժեքի և P_1^* արտերկրյա գնի դեպքում: PPP ուղղի երկայնքով գնողունակության համարժեքությունը տեղի ունի: PPP-ից ձախ ազգային արժույթը գերարժևորված է, իսկ աջ՝ թերարժևորված:
- Ապրանքների շուկան հավասարակշռված է, այսինքն՝ ամբողջական պահանջարկը հավասար է ամբողջական առաջարկին:
Գծ. 1-ի երկրորդ գրաֆիկում այդպես է P_1 գնի և Y_1 իրական եկամտի դեպքում:
- Փողի շուկան հավասարակշռված է:
Գծ. 1-ի երրորդ գրաֆիկում այդպես է M_1 փողի պահանջարկի և $DC_1 + R_1$ փողի առաջարկի դեպքում, որտեղ DC ներքին վարկավորումն է, իսկ R միջազգային պահուստների պաշարը:

Գծապատկեր 1: Մոդելի հավասարակշռությունը



Արժեզրկման ազդեցությունը մոդելի հավասարակշռության վրա

Հստ մոնետար մոտեցման՝ արժեզրկումը վճարային հաշվեկշռի վրա ազդում է փողի շուկայի վրա ներգործելու միջոցով:


Այսպես՝ գծ. 2-ում արժեզրկման դեպքում փոխարժեքը S_1 -ից բարձրանում է S_2 : Արդյունքում՝ տեղական ապրանքները դառնում են ավելի մրցունակ, արտահանումն ընդլայնվում է, ներմուծումը կրճատվում է, ազգային արժույթի նկատմամբ պահանջարկն աճում է M_{d1} -ից M_{d2} , և փողի պահանջարկը՝ M_2 , գերազանցում է առաջարկին՝ M_1 :

Հնթացիկ հաշվի բարելավումն ազգային արժույթի վրա արժևորման ճնշում է գործադրում, ինչը կանխելու համար ԿԲ գնում է ավելցուկային արտարժույթը: Պահուստներն ընդլայնվում են R_1 -ից R_2 , և փողի առաջարկն M_1 -ից բարձրանում է M_2 . փողի շուկան վերահավասարակշռվում է:

Միևնույն ժամանակ, փողի առաջարկի աճի հետևանքով ամբողջական պահանջարկն ընդլայնվում է AD_1 -ից AD_2 , ինչը վեր ուղղված ճնշում է գործադրում գների վրա, մինչև գները բարձրանան P_2 . ապրանքների շուկան վերահավասարակշռվում է:

Գների P_1 -ից մինչև P_2 աճը վերականգնում է նաև գնողունակության համարժեքությունը:

Գծապատկեր 2: Արժեզրկման ազդեցությունը



Դրանով իսկ, գների աճը հավասարակշռում է փողի իրական հաշվեկշիռը ($M_1/P_1 = M_2/P_2$) և նաև չեզոքացնում է մրցունակության բարելավումը:

Վճարային հաշվեկշիռը հավասարակշռվում է, քանի որ հավասարակշռվել է փողի շուկան:

Այսպիսով՝ $\times\%$ արժեզրկման վերջնարդյունքը տեղական գներն է և փողի առաջարկի $\times\%$ աճն է: Արժեզրկման հետևանքով ձևավորված վճարային հաշվեկշռի ավելցուկը սոսկ ժամանակավոր բնույթ է կրում:

Արժեզրկման դրական ազդեցությունը վճարային հաշվեկշռի վրա շարունակվում է սոսկ այնքան, մինչև փողի շուկան վերահավասարակշռվի:

Փողի առաջարկի աճը ֆիքսված փոխարժեքի դեպքում

Կենտրոնական բանկը բաց շուկայի առքի միջոցով փողի առաջարկը M_1 -ից ընդլայնում է M_2 : Գծ. 3-ում փողի առաջարկի ուղիղը M_{S1} -ից տեղաշարժվում է M_{S2} , և փողի M_2 առաջարկը գերազանցում է M_1 պահանջարկին:

Փողի առաջարկի աճի հետևանքով ապրանքների շուկայում ամբողջական պահանջարկն ընդլայնվում է AD_1 -ից AD_2 , ինչից գները բարձրանում են P_1 -ից P_2 :


P_2 գնի ու S_1 փոխարժեքի դեպքում տնտեսության մրցունակությունը նվազում է, ինչից ընթացիկ հաշվի մնացորդը դառնում է բացասական, և ձևավորվում է արժույթի արժեզրկման ճնշում:

Քանի որ ԿԲ վարում է ֆիքսված փոխարժեքի քաղաքականություն, ապա արժեզրկումը կանխելու համար վաճառում է արտարժույթ. պահուստները կրճատվում են R_1 -ից R_2 :

Փողի առաջարկը համարժեքորեն կրճատվում է, ինչից ամբողջական պահանջարկը նվազում է, և գները վերադառնում են նախկին P_1 մակարդակ:

Շուկաները վերահավասարակշռվում են:

Գծապատկեր 3: Փողի առաջարկի աճը ֆիքսված փոխարժեքի դեպքում



Այսպիսով, երբ ԿԲ վարում է ֆիքսված փոխարժեքի քաղաքականություն և միաժամանակ իրագործում է մոնետար ընդլայնում, ապա փողի առաջարկի արժեթղթային բաղադրիչի ընդլայնումը (D_1 -ից D_2) զուգորդվում է միջազգային պահուստների կրճատմամբ (R_1 -ից R_2): Արդյունքում՝ փողի առաջարկը վերականգնվում է նախկին մակարդակում:

Դրանով իսկ, մոնետար ընդլայնման բացասական ազդեցությունը վճարային հաշվեկշռի վրա ժամանակավոր է և ինքնակարգավորվող:

Փողի առաջարկի աճը լողացող փոխարժեքի դեպքում

Իսկ ինչպե՞ս է փոխվում իրավիճակը, եթե ԿԲ վարում է ոչ թե ֆիքսված, այլ լողացող փոխարժեքի քաղաքականություն:

Դարձյալ ունենք, որ փողի առաջարկի M_1 -ից M_2 աճի արդյունքում ամբողջական պահանջարկն ընդլայնվում է AD_1 -ից AD_2 , և գները բարձրանում են P_1 -ից P_2 (գծ. 4):

Տնտեսությունը դառնում է նվազ մրցունակ, և ընթացիկ հաշիվը վատթարանում է: Զևավորվում է արժեզրկման ճնշում, ինչին ԿԲ չի ընդդիմանում:


Արժույթն արժեզրկվում է:

Միևնույն ժամանակ, գների աճն ընդլայնում է փողի պահանջարկը M_{d1} -ից M_{d2} , և փողի շուկան վերահավասարակշռվում է:

Դրանով իսկ՝ փողի առաջարկի $\times\%$ աճը բերում է գների ու փոխարժեքի $\times\%$ աճին:

Այսպիսով, երբ ԿԲ իրագործում է մոնետար ընդլայնում, ապա ֆիքսված փոխարժեքի դեպքում փողի շուկայի հավասարակշռությունը վերականգնվում է միջազգային պահուստների կրճատման միջոցով, իսկ լողացող փոխարժեքի դեպքում՝ գների ու փոխարժեքի աճի միջոցով:

Գծապատկեր 4: Փողի առաջարկի աճը լողացող փոխարժեքի դեպքում



Եկամտի աճը ֆիքսված փոխարժեքի դեպքում


Իրական եկամտի աճի դեպքում ամբողջական առաջարկի ուղիղը տեղաշարժվում է աջ: Ապրանքների առաջարկը՝ y_2 , գերազանցում է պահանջարկին՝ y_1 , և գները կրճատվում են P_1 -ից P_2 :

Եկամտի աճն ընդլայնում է փողի գործարքային պահանջարկը, և այն M_{d1} -ից բարձրանում է M_{d2} : Արդյունքում՝ փողի պահանջարկը՝ M_2 , գերազանցում է առաջարկին՝ M_1 :

Գների անկումը փոխարժեքի S_1 անփոփոխ մակարդակի դեպքում նշանակում է մրցունակության բարելավում, որից ընթացիկ հաշիվի մնացորդը դառնում է դրական: Արժույթի արժեզրկումը կանխելու համար ԿԲ պետք է գնի ավելցուկային արտարժույթը: Պահուստներն աճում են R_1 -ից R_2 , ինչն ընդլայնում է փողի առաջարկը M_1 -ից M_2 :

Փողի առաջարկի աճն աջ է տեղաշարժում ամբողջական պահանջարկը AD_1 -ից AD_2 , որի շնորհիվ գները վերադառնում են նախկին P_1 մակարդակ, ու գնողունակություն համարժեքությունը վերականգնվում է:

Գծապատկեր 5: Եկամտի աճը ֆիքսված փոխարժեքի դեպքում



Արդյունքում՝ գների մակարդակը թեպետ չի փոխվում, սակայն փողի առաջարկն ընդլայնվում է: Սա նշանակում է, որ փողի իրական հաշվեկշիռն աճել է. $M_2/P_1 > M_1/P_1$: Դա խնդիր չի հարուցում, քանի որ ավելի բարձր եկամտին համապատասխանում է փողի գործարքային պահանջարկի ավելի բարձր մակարդակ. «ցանկալի» փողի քանակությունն աճել է:

Եկամտի աճը լողացող փոխարժեքի դեպքում

Եկամտի աճի դեպքում ամբողջական առաջարկի ուղիղ տեղաշարժվում է աջ, և ամբողջական առաջարկը՝ y_2 , գերազանցում է պահանջարկին՝ y_1 : Ապրանքների շուկայի հավասարակշռությունը վերականգնելու համար գները կրճատվում են P_1 -ից P_2 :

Գների անկմանը հաջորդում է արժույթի արժևորումը՝ գնողունակության համարժեքությունը վերականգնելու համար:


Փողի իրական հաշվեկշիռը նախկինի համեմատ բարձրանում է. $M_1/P_2 > M_1/P_1$, բայց քանի որ եկամտի աճն ընդլայնում է փողի գործարքային պահանջարկը, ապա փողի ընդլայնված իրական հաշվեկշիռը տնտեսվարողները պատրաստակամորեն ընդունում են:

Եկամտի աճն ընդլայնում է փողի գործարքային պահանջարկը, բայց, միևնույն ժամանակ, գների անկումը կրճատում է փողի պահանջարկը, արդյունքում՝ փողի պահանջարկը մնում է M_1 մակարդակում:

Այսպիսով՝ եկամտի աճի դեպքում.

- եթե փոխարժեքը ֆիքսված է, ապա հավասարակշռությունը վերականգնվում է փողի առաջարկի աճի, մասնավորապես՝ պահուստների ընդլայնման միջոցով,
- եթե փոխարժեքը լողացող է, ապա հավասարակշռությունը վերականգնվում է գների անկման ու արժույթի արժևորման միջոցով:

Գծապատկեր 6: Եկամտի աճը լողացող փոխարժեքի դեպքում



Արտերկրում գների աճը ֆիքսված փոխարժեքի դեպքում


Արտերկրում գների աճի դեպքում PPP ուղիղը պտտվում է հետո՝ PPP_1 -ից PPP_2 :

Գնողունակության համարժեքությունը S_1 ֆիքսված փոխարժեքի դեպքում կվերականգնվի, եթե տեղական գները բարձրանան P_1 -ից P_2 :

Մինչ այդ, տեղական ապրանքները դառնում են մրցունակ, ինչից ընթացիկ հաշվի մնացորդը դառնում է դրական: Ազգային արժույթի նկատմամբ պահանջարկն աճում է, որն արտահայտվում է փողի պահանջարկի M_{d1} -ից M_{d2} տեղաշարժով:

Ազգային արժույթի արժևորում թույլ չտալու համար ԿԲ գնում է ավելցուկային արտարժույթը: Միջազգային պահուստներն աճում են R_1 -ից R_2 , և փողի առաջարկն ընդլայնվում է M_1 -ից M_2 : Փողի առաջարկի աճը և արժույթի թերարժևորված վիճակը բերում են ամբողջական պահանջարկի ընդլայնմանը (AD_1 -ից AD_2) ու, որպես հետևանք, գների P_1 -ից P_2 աճին:

Գծապատկեր 7: Արտերկրում գների աճը ֆիքսված փոխարժեքի դեպքում



Գների P_1 -ից P_2 աճի շնորհիվ գնողունակության համարժեքությունը վերականգնվում է, ինչն իր հերթին վերջ է դնում ընթացիկ հաշվի ավելցուկին:

Այսպիսով, երբ ԿԲ ֆիքսում է փոխարժեքը, ապա արտերկրում գների փոփոխությունը հանգեցնում է տեղական գների նույն ուղղությամբ փոփոխությանը: Այսինքն՝ ֆիքսված փոխարժեք ունեցող երկիրը ներմուծում է գնաճ:

Արտերկրում գների աճը լողացող փոխարժեքի դեպքում


Արտերկրում գների աճի դեպքում PPP ուղիղը պտտվում է հետ՝ PPP_1 -ից PPP_2 :

Լողացող փոխարժեքի դեպքում արտերկրյա գների աճի՝ մրցունակության վրա դրական ազդեցությունը հակակշռվում է արժույթի արժևորմամբ, ինչը վերականգնում է գնողունակության համարժեքությունը ներքին գների միևնույն մակարդակի համար:

Դրանով իսկ՝ լողացող փոխարժեքի դեպքում արտերկրյա գների փոփոխությունը որևէ ազդեցություն չի թողնում տեղական գների, ինչպես նաև ամբողջական պահանջարկի ու թողարկման վրա:

Հետևաբար՝ լողացող փոխարժեքը երկրին ձերբազատում է գնաճի ներմուծումից:

Գծապատկեր 8: Արտերկրում գների աճը լողացող փոխարժեքի դեպքում



Աղ. 1-ում ամփոփ ներկայացված են տարբեր ցնցումների դեպքում երեք հիմնական պարամետրերի փոփոխության ուղղությունները:

Աղյուսակ 1:

	Փողի առաջարկի աճ		Եկամտի աճ		Արտերկրյա գների աճ	
	Ֆիքսված	Լողացող	Ֆիքսված	Լողացող	Ֆիքսված	Լողացող
Գները	0	+	0	-	+	0
Փոխարժեքը	..	+	..	-	..	-
Պահուստները	-	..	+	..	+	..